ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԳՐԻԳՈՐ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՄԱՐԴՈՒ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐԵՐ

Հաճախ, ինչպես առօրյայում, այնպես էլ մասնագետների շրջանում «կապիտալիզմ» տնտեսակարգը բնորոշվում է որպես շուկայական ազատ տնտեսություն: Հատկանշական է, որ առանձնապես հետհամայնավարական երկրներում, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունում, ավելի գործածական է դարձել երկրորդ արտահայտությունը: Այդ հանգամանքը պայմանավորված է մարդկանց գիտակցությունում կատարված այն փոփոխությամբ, համաձայն որի շուկայական ազատ հարաբերությունների հիմքում կամավոր գործընկերությունն է կամ կողմերի ազատության իրավունքը: Այս տեսանկյունից շուկայական ազատ տնտեսությունը կառուցվում է ինչպես անհատի (մարդու), այնպես էլ տնտեսական ազատությունների վրա: Ահա թե ինչու նշվածներն այն երկու անկյունաքարերն են, որոնց վրա հենվում են շուկայական ինստիտուտներն ու մյուս արժեքային համակարգերը: Եվ հենց այդ անկյունաքարերի կայունացման աստիճանով են պայմանավորված ամբողջ շուկայական տնտեսության կայացածությունը և դրա հաջողություններն ու ձեռքբերումները, այդ թվում, առաջին հերթին, բնակչության կենսամակարդակը:

Մարդու (անհատական) և տնտեսական ազատությունների ցուցանիշների կիրառմամբ դիտարկվում են ինչպես այդպիսի ազատությունները, այնպես էլ դրանց փոփոխությունը, գնահատվում է այդ երևույթների համընդհանուր վիճակը:

Հոդվածում բերված են Խորհրդային Միության նախկին երկրներում մարդու ազատության և տնտեսական ազատության համաթվերը, որոնք համեմատվել են աշխարհի երկրների խմբավորումների ցուցանիշների հետ, համապատասխան եզրակացություններ ու առաջարկություններ են կատարվել ՀՀ-ում դրանց բարելավման ուղղությամբ:

Հիմնաբառեր. *մարդու ազատություն, տնտեսական ազատություն, համաթիվ, օրենքի գերակայություն, անվտանգության ցուցանիշ, բարեկեցություն, ազատական գաղափարախոսություն*

JEL: A13, D6, N3

Նա, ով ձգտում ազատություն ստանալ ոչ թե սեփական ազատության, այլ որևէ ուրիշ բանի համար, դատապարտված է ստրուկ լինելու. սա Ալեքսիս դե Տոկվիլի միտքն է (1856 թ.)[1]: Տեսականորեն շատ մարդիկ ներկայում էլ համաձայն են այս տեսակետի հետ. ազատությունը պետք է մարդկության բարձրագույն նպատակը լինի, որ մշտապես կրում է իր մեջ:

Մինչդեռ, իրական կյանքում ամեն ինչ այդքան պարզունակ չէ: Ազատությունների վրա հիմնված հասարակարգի (կարգերի) հիմնումը տարբեր ձևերով շաղկապված և կախված է այն բանից, թե արդյոք հնարավո՞ր է հասարակության համար ապահովել այլ ցանկալի բարիքներ՝ բարեկեցություն, ինքնադրսևորման հնարավորություն, կայունություն, խաղաղություն, հոգևոր զարգացում և այլն: Ազատական գաղափարախոսությունը մշտապես մրցակցում է քաղաքական մյուս կացութաձևերի հետ: Օրինակ՝ սոցիալիզմը կամ ազատական հասարակարգերի մյուս տարատեսակները մշտապես գայթակղություն են առաջացնում, քանի որ, թվում է, թե դրանք առաջարկում են նշված ազատություններին հասնելու ուղիղ ճանապարհ՝ առանց ներքաշվելու զարգացման անկանխատեսելի և անկանոն գործողությունների մեջ:

1989 թվականին թվում էր՝ «պատմության ավարտը» մոտ է. ազատական գաղափարախոսությունը հաղթեց կոմունիստական գաղափարախոսությանը գրեթե բոլոր երկրներում, և ազատական հասարակարգի առավելությունները տեսանելի և ընդունելի դարձան բոլոր առումներով, և կարծիք կար, թե այլընտրանքային տեսակետներ այլևս առաջ չեն գա: Սակայն հայտնի է, որ պատմությունը երբեք չի ավարտվում, և նախկին մարտահրավերները հաճախակի հարթակ են վերադառնում ու դառնում բանավեճերի առարկա: Ուստի կանխատեսելի էր, որ 2008 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից և հատկապես 2016 թվականի վերջին ԱՄՆ-ում Դոնալդ Թրամպի նախագահ ընտրվելուց հետո ազատական գաղափարախոսությունը կրկին հայտնվեց սուր քննադատությունների կենտրոնում՝ հիմնականում հետևյալ ուղղություններով.

- Տնտեսական ազատությունը, որպես անհատական ազատության հիմնական բաղադրիչ, դարձավ այդպիսի քննադատությունների առաջին «զոհը»: Ճգնաժամի առաջացման շրջանում բարձրացան հարկերի դրույքաչափերը, թուլացան ֆինանսական շուկաների կարգավորման լծակները, ներդրվեցին ազատ դրամավարկային քաղաքականություններ, որոնք կիրառվեցին աշխարհի տարբեր երկրների կառավարությունների կողմից: Եթե Համաշխարհային տնտեսական ազատության (Economic Freedom of the World) մասին զեկույցում 1980 և 1990-ականներին արձանագրվել է տնտեսական ազատության կայուն աճ, ապա ճգնաժամի ընթացքում այդպիսի աճը դադարեց, իսկ որոշակի երկրներում նաև տնտեսական ազատության բաղադրիչների հետընթաց տեղի ունեցավ: Այդ պատճառով հասարակության

[1] Տե՛ս The Human Freedom Index: A Global Measurement of Personal, Civil, and Economic Freedom, Cato Institute, Fraser Institute Friedrich Naumann Stiftung, IEA, VISIO, 2015, էջ 3:

կարծիքը դեռևս շարունակում է հիմնականում բացասական երանգավորում ունենալ կապիտալիզմի և ազատ շուկայական տնտեսության հիմնադրույթների նկատմամբ:

- Անհատական ազատությունների ինստիտուցիոնալ նախապայմանները մասնակիորեն քայքայվեցին (խաթարվեցին): Ազատությունը լավագույն ձևով զարգանում է ազատական ժողովրդավարության, օրինակ՝ քաղաքական որոշումների պայմաններում, որոնք միավորում են քաղաքացիների վարքագծի կանոնները սահմանադրությամբ երաշխավորված անձնական ազատությունների հետ: Կառավարման այս մոդելը, որը 1990-ականներին համընդհանուր տարածում ստացավ աշխարհի գրեթե բոլոր երկրներում, ներկայումս մի շարք երկրներում վերափոխվում է: Սա հատկապես վերաբերում է նախկինում Խորհրդային Միության կազմի մեջ մտնող գրեթե բոլոր երկրներին, որտեղ 1989 թվականից հետո՝ անկախության տարիներին, ներդրվեցին և հաստատվեցին ազատական ինստիտուտները, սակայն այդ երկրներից շատերն այսօր վերադառնում են անձնիշխանության (ավտոկրատիա): Ընդ որում, այդպիսի գործընթացների ժամանակ մարդկանց անձնական ազատությունները զգալիորեն սահմանափակվում են: Իրականում, հետընթացի միտումներն ավելի շատ ուղղված են անձնական ազատություններին, այլ ոչ թե ժողովրդավարության սահմանափակմանը, քանի որ առնվազն պահպանվում են ժողովրդավարության տեսանելի դրսևորումները, ինչպիսիք են, օրինակ՝ ընտրությունները: Միևնույն ժամանակ, ազատական ժողովրդավարությանը բնորոշ մյուս տարրերը, օրինակ՝ մամուլի ազատությունը, սահմանափակվում է: Խորհրդային Միության նախկին երկրները, բացառությամբ՝ Մերձբալթյան երկրների, դարձել են այդպիսի քաղաքականության օրինակներ, որտեղ թեև կազմակերպվում են ընտրություններ, սակայն խոսքի, ցույցերի և հավաքների ազատությունը սահմանափակվում է, ինչպես նաև մասնակիորեն չի պահպանվում օրենքի գերակայությունը:
- Քաղաքական անկայունությունը և հակամարտությունները, որոնք նախորդ տասնամյակներում, կարելի է ասել, դադարել էին, այժմ կրկին աշխարհի ուշադրության կենտրոնում են: Աշխարհի մի շարք տարածաշրջաններում կլեպտոկրատիկ կառավարությունները կանգնած են ամբողջատիրական մարտահրավերների առջև: Իսլամական զինված խմբերի ազդեցության տակ գտնվող երկրներում հաստատվում են ահաբեկչական ռեժիմներ, մինչդեռ ազատական–ժողովրդավարական ուժերը չեն կարողանում ճշգրիտ որոշել, թե ինչպես է պետք չեզոքացնել նման միտումները:
- Վերջին տարիներին Չինաստանը և մյուս «տնտեսական վագրերը», որոնց շարքում են Վիետնամը և Արաբական Միացյալ Էմիրությունների երկրները (օրինակ՝ Բահրեյնը), աշխարհին ցուցադրում են տնտեսական աճի ապահովման նոր մոդել: Նոր քաղաքական «առասպելաբանությունը» պնդում է, որ միայն կոշտ ինքնիշխան (ավտորիտար) ռեժիմների պայմաններում կարող են տնտեսական աճի և բարեկեցության ռազմավարություններ ձևավորվել, սակայն ազատական գաղափարախոսությանը խորթ է այդ պնդումը: Այս «առասպելը» կարող է կամ իրական հաջողությունների խիստ անհատականացված ընկալման, կամ էլ ինքնակալների, ազատականների անհաջողությունների արդյունքը լինել: Մինչդեռ կարելի է մատնանշել ինքնիշխան ռեժիմների կողմից տնտեսական աճի ապահովման միայն մի քանի հաջողված օրինակ, որոնք բացառություն են ընդհանուր կանոններից: Ոչ

ազատական հասարակարգերում բնակչության գերակշռող մասն ապրում է աղքատության և կաշառակերության պայմաններում:

Սա է պատճառը, որ այդքան կարևորվում է իրերի ճիշտ ընկալումը: Չոր փաստերը պետք է հաշվի առնվեն՝ հաստատելու համար այն ըմբռնումը, որ ազատությունները որևէ կերպ թույլ չտվեցին հասնելու ավելի լավ հասարակություն ստեղծելու նպատակին:

Վերը նշված հանգամանքների վերհանումը մարդկանց ազատության համաթվի (Human Freedom Index) հաշվարկման նպատակներից մեկն է, որն ապահովում է՝

- Աշխարհում ազատության իրավիճակի մասին տեղեկատվությունը: Հաճախ ազատությունը կորսվում է աստիճանաբար, այդ պատճառով էլ դա հստակ չի ընկալվում: Ազատության համաթիվը կարող է ճշգրտել մեր պատկերացումները ապաազատականացման թաքնված գործընթացների մասին:
- Անհատների և հասարակության համար ազատությունների դրական հետևանքների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչը թույլ է տալիս համեմատական վերլուծություն իրականացնել ազատության և մյուս ցանկալի սոցիալական ցուցանիշների (օրինակ՝ ժողովրդավարություն և բարեկեցություն) միջև: Սա է պատճառը, որ մենք կենտրոնանում ենք զուտ անձնական ազատության՝ որպես պարտադրանքի բացակայության վրա: Միայն այս ցուցանիշն է հնարավորություն տալիս քննարկելու ազատությունը՝ դրա որոշ նախապայմաններին համապատասխան: Մենք պետք է կարողանանք հաշվի առնել այն փաստարկը, որ որոշ ազատություններ կարող են հաջողությամբ փոխանցվել բռնատիրական ռեժիմներին: Բացի այդ, մենք կարող ենք ուսումնասիրել որոշակի անհամապատասխանություններ, որոնք առաջանում են ազատության առանձին տարրերի միջև (օրինակ՝ անհատական և քաղաքացիական ազատությունների):

Այսպիսով՝ մարդու ազատության ցուցանիշը կարող է օգնել՝ հասկանալու աշխարհում ազատության ապահովման հետ կապված որոշ բարդ հարցեր:

Մարդու ազատության համաթիվն ընդգրկում է անձնական, քաղաքացիական և տնտեսական ազատության բաղադրիչները: Freedom House–ի կողմից հրապարակվող՝ մարդու ազատության համաթիվը ներառում է ազատությունների լայն տիրույթ, իսկ «ազատություններ» եզրը նշանակում է որևէ ստիպողական (պարտադրված) սահմանափակումների բացակայություն: Համաթիվը հաշվարկվում է 76 առանձին ցուցանիշների հիման վրա, որոնք բնութագրում են անհատական և տնտեսական ազատությունները հետևյալ ոլորտներում՝

- օրենքի գերակայություն,
- պաշտպանվածություն և անվտանգություն,
- մարդկանց տեղաշարժ,
- կրոն,
- միավորումների, հավաքների ազատություն և քաղաքացիական հասարակություն,
- խոսքի և տեղեկատվության ազատություն,
- հարաբերություններ,
- կառավարության չափեր,
- իրավական համակարգ և սեփականության իրավունքներ,

- փողի մատչելիություն,
- արտաքին առևտրի ազատություն,
- վարկավորման, աշխատանքի և գործարարության կարգավորում[2]:

Ամենավերջին հասանելի տվյալները վերաբերում են 2013 թ., որոնց հիման վրա էլ 2015 թվականի ժողովածուում հաշվարկվել և հրապարակվել են 152 երկրների համաթվերը: Տարբեր երկրների համար համաթվերը համեմատվում են՝ սկսած 2008 թվականից. հավաստի տվյալների հիման վրա հաշվարկվել է մարդու ազատության համաթիվը[3]:

Մարդու ազատության համաթիվը ներկայացնող զեկույցում արտացոլված է մարդու ազատությունը ողջ աշխարհում: Դա պատկերում է հետազոտությունների և քննարկումների բազմամյա ծրագրերի արդյունքները, որոնք իրականացվել են Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում՝ բազմաթիվ երկրների տարբեր ոլորտների մասնագետների մասնակցությամբ: Զեկույցում օգտագործվում, հարմարեցվում և զարգացվում է այն մեթոդաբանությունը, որը մշակվել է տասնամյակներ շարունակ Ֆրեյզերի ինստիտուտի աշխատակիցների կողմից՝ տնտեսական ազատությունը չափելու և «Տնտեսական ազատությունը աշխարհում» (Economic Freedom of the World) զեկույցում հրապարակելու համար: Տնտեսական ազատությունը չափելու հիմնախնդրի լուծմանը նպատակաուղղված նախագիծը ցույց է տալիս այդ ցուցանիշի հաշվարկման կարևորությունը, տնտեսական ազատության հայեցակարգի կարևորությունը և, ընդհանրապես, տնտեսական ազատության նշանակությունը բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացման առումով:

Մարդու ազատության համաթվի հաշվարկման և հրապարակման հիմնական նպատակը աշխարհի մակարդակով ազատության մասին ողջամիտ պատկեր ստանալն է: Սակայն շատ ավելի կարևոր է մանրամասնորեն ուսումնասիրել, թե որքանով է ազդում ազատության այդ ցուցանիշը մի շարք այլ՝ սոցիալական և տնտեսական երևույթների վրա, որքանով են երկրում փոխկապված ազատության մակարդակը և սոցիալական ու տնտեսական առաջընթացը:

Ազատական տեսակետների և իշխանության միջև մրցակցությունը հազարամյակների պատմություն ունի. վիճաբանություններն այդ հարցի շուրջ շարունակվում են «ազատություն» հասկացության ձևավորման պահից մինչ օրս: Օրինակ՝ Պլատոնի և Հոբսի սահմանմամբ արդարացվում է անձի բացարձակ, համատարած ազատությունը հասարակության նկատմամբ: Մյուսները, օրինակ՝ մ.թ.ա. 6-րդ դարի չինացի փիլիսոփա Լաո Ցզուն կամ 16-րդ դարի իսպանացի սխոլաստիկներն արտահայտում և զարգացնում էին այն գաղափարները, որոնք համահունչ էին ժամանակակից քաղաքական փիլիսոփայության հիմնադիր Ջոն Լոկի տեսակետին, ով ազատություն ասելով ենթադրում էր, որ անհատը չի կարող լինել որևէ մեկի (այլ անձի) կամայականության դրսևորման սուբյեկտը, այլ պետք է ազատորեն գործի իր սեփական կամքով[4]:

---

[2] Տե՛ս The Human Freedom Index: A Global Measurement of Personal, Civil, and Economic Freedom, Cato Institute, Fraser Institute Friedrich Naumann Stiftung, IEA, VISIO, 2015, էջ 5:

[3] Տե՛ս նույն տեղը:

[4] Տե՛ս **Locke J.,** 1691/1960, Two Treatises of Government: The Second Treatise: Liberty Fund, at Online Library of Liberty, http://oll.libertyfund.org/ titles/222#Locke_0057_71.

Մարդու ազատության ցուցանիշը համընկնում է այս վերջին տեսակետի հետ, որին վերջին մի քանի հարյուրամյակների ընթացքում հետևում է ժամանակակից ազատական աշխարհը: Ձեկույցի հեղինակներն «ազատություն» եզրն օգտագործում են որպես սոցիալական հասկացություն, որը ճանաչում է անհատների արժանապատվությունը և սահմանվում է որպես հարկադրական սահմանափակումների բացակայություն[5]: Այս տեսակետը տարբերվում է մեխանիստիկների հայեցակարգից, ըստ որի այն ամենը, ինչը սահմանափակում է մարդու՝ ցանկացածն անելու կարողությունը (լինի բնական կամ ֆիզիկական արգելք, կամ մեկ այլ անձի կողմից պարտադրված սահմանափակում), դիտարկվում է որպես մարդու ազատությունների խախտում: Այսպիսով՝ հետազոտության իմաստով, ազատությունը նշանակում է՝ մարդիկ իրավունք ունեն ապրելու, գործելու այնպես, ինչպես ցանկանում են այնքան ժամանակ, քանի դեռ նրանք ճանաչում են մյուսների հավասար իրավունքները:

Աղյուսակ 1-ում ներկայացված են մարդու ազատության համաթվի բաղադրիչներն ու այն հիմնական փոփոխականները (ցուցանիշները), որոնք ներառված են ամեն բաղադրիչի մեջ: Յուրաքանչյուր ցուցանիշ գնահատվել է 0–10-ը միավորային սանդղակով, որտեղ 10 գնահատականը նշանակում է բարձրագույն ազատությունը: Համաթիվը հաշվարկելու համար միջինացվում են յուրաքանչյուր բաղադրիչի փոփոխականների նշանակությունները (աղյուսակում դրանք նշված են հռոմեական թվանիշերով), որի արդյունքում ստացվում է բոլոր յոթ բաղադրիչների միջին ցուցանիշը: Նշենք նաև, որ մի քանի հիմնական փոփոխականներ, իրենց հերթին, ներառում են ենթացուցանիշներ, որոնց միջինացված արժեքները կազմում են հիմնական փոփոխականի վարկանիշը: Այնուհետև հաշվարկվում են «օրենքի գերակայություն», «պաշտպանվածություն և անվտանգություն» բաղադրիչների միջին արժեքները, ինչպես նաև մյուս բաղադրիչների միջին արժեքները, ապա բոլոր բաղադրիչների միջին արժեքների թվաբանական միջինի հաշվարկմամբ ստանում ենք անձնական ազատության համաթվի արժեքը:

Մարդու ազատության համաթվի վարկանիշը ստանալու համար հաշվարկվում է երկրում անձնական ազատության և տնտեսական ազատության համաթվերի միջին արժեքը: Այսպիսով՝ մարդու ազատության համաթիվը, ընդհանուր առմամբ, ներառում է 76 առանձին փոփոխական, որից 42-ը բնութագրում են տնտեսական ազատության, իսկ 34-ը՝ անձնական ազատության ցուցանիշները:

---

[5] Տե՛ս **George H. Smith,** The System of Liberty: Themes in the History of Classical Liberalism (New York: Cambridge University Press, 2013), especially chapter 7 (էջ 133–151), “The Idea of Freedom” and **Palmer Tom G., Realizing Freedom:** Libertarian Theory, History, and Practice (Washington: Cato Institute, 2009) գրքում:

Աղյուսակ 1

Անձնական ազատության համաթվի կառուցվածքը

1. Օրենքի գերակայություն և անվտանգություն
Ա. Օրենքի գերակայություն
I. վարչարարական արդարադատություն
II. քաղաքացիական արդարադատություն
III. քրեական արդարադատություն
Բ. Պաշտպանվածություն և անվտանգություն
I. մարդասպանություն
II. առևանգում, վիճաբանություն և ահաբեկչություն
ա. առևանգումներ
բ. բռնություններ
գ. կազմակերպված ներքին ընդհարումներ
դ. ահաբեկչություններից մահացածներ
ե. ահաբեկչություններից տուժածներ
III. կանանց պաշտպանվածություն
ա. սեռական հողի վրա կանանց հետապնդում
բ. անհայտ կորած կանայք
գ. ժառանգման իրավունք
2. Առանձնահատուկ անձնական ազատություններ
Ա. Տեղաշարժ
I. արտասահման տեղաշարժվելու ազատություն
II. ներքին տեղաշարժի ազատություն
III. կանանց տեղաշարժի ազատություն
Բ. Կրոն
I. կրոնական կազմակերպություններ հիմնադրելու ազատություն
II. կրոնական կազմակերպությունների անկախություն
Գ. Միավորումների, հավաքների ազատություն և քաղաքացիական հասարակություն
I. միավորումներ կազմելու ազատություն
II. հավաքներ և ցույցեր կազմակերպելու ազատություն
III. կազմակերպությունների անկախություն (քաղաքական իշխանությունից գործունեության անկախություն)
ա. քաղաքական կուսակցությունների
բ. մասնագիտական միավորումների
գ. կրթական, մարզական և մշակութային կազմակերպությունների
IV. կազմակերպություններ հիմնադրելու ազատություն
ա. քաղաքական կուսակցությունների
բ. մասնագիտական միավորումների
գ. կրթական, մարզական և մշակութային կազմակերպությունների
Դ. Խոսքի ազատություն և տեղեկատվություն
I. մամուլի ազատություն
II. ԶԼՄ-ներով տրամադրվող տեղեկատվության բովանդակությունը կանոնակարգող օրենքներ և կարգավորումներ
III. ԶԼՄ-ներով տրամադրվող տեղեկատվության նկատմամբ քաղաքական ճնշումներ և վերահսկողություն
IV. արտասահմանյան աղբյուրներից տեղեկատվություն ստանալու ազատություն
ա. արտասահմանյան հեռուստատեսության մատչելիություն
բ. արտասահմանյան տպագիր մամուլի մատչելիություն
Ե. Հարաբերությունների ազատություն
I. ծնողական իրավունքներ
II. միասեռ անձանց հարաբերություններ
ա. տղամարդկանց միասեռ հարաբերություններ
բ. կանանց միասեռ հարաբերություններ

Աղբյուրը՝ *The Human Freedom Index: A Global Measurement of Personal, Civil, and Economic Freedom, Cato Institute, Washington, D.C., USA, Fraser Institute, Vancouver BC, Canada, Friedrich Naumann Foundation for Freedom, Berlin, Germany, 2016, էջ 10–11:*

Աղյուսակ 2-ում բերված է մարդու ազատության համաթիվը Խորհրդային Միության նախկին երկրներում 2013 թվականին: Աղյուսակի տվյալներից հետևում է, որ նշված երկրների ազատության համաթվի միջին մեծությունը նշված թվականին կազմել է 7.08, ըստ որում, այդ ցուցանիշը գերազանցել են Էստոնիան (ապահովելով 8.22 միավոր), Լիտվան (8.21) և Լատվիան (8.13), որոնք Եվրոմիության անդամ երկրներ են: Եթե Խորհրդային Միության նախկին երկրների շարքից բացառենք Մերձբալթյան երկրները, ապա կստացվի, որ մնացած 12 երկրների շարքում առաջատարը Վրաստանն է (7.70), այնուհետև՝ Հայաստանը (7.23) և Մոլդովան (6.93): Հետաքրքիր է նկատել, որ անհատական ազատության համաթվի մեծությամբ (բացառությամբ մերձբալթյան հանրապետությունների) առաջատարը Ուկրաինան է (7.58), ապա՝ Վրաստանը (7.57), Մոլդովան (7.22) Հայաստանը (6.79): Այսինքն՝ Հայաստանի Հանրապետությունը տվյալ խմբի երկրների միջին մեծությունից (7.10) այնքան էլ ցածր ցուցանիշ չունի. զիջում է միայն 6-ին:

Աղյուսակ 2

Մարդու ազատության համաթիվը Խորհրդային Միության նախկին երկրներում՝ 2013 թվականին

ՀՀ	Երկիր	Ազատության համաթիվ	Անհատական ազատություն	Տնտեսական ազատություն	Օրենքի գերակայություն	Անվտանգություն և պաշտպանվածություն	Անհատական ազատություն (հանած օրենքի գերակայությունը և անվտանգությունը)
1.	Հայաստան	7.23	6.79	7.67	4.63	9.03	6.74
2.	Ադրբեջան	6.02	5.69	6.34	4.02	9.00	4.88
3.	Բելառուս	..	..	..	..	..	..
4.	Էստոնիա	8.22	8.85	7.58	7.55	9.33	9.27
5.	Վրաստան	7.70	7.57	7.83	5.33	8.26	8.35
6.	Ղազախստան	6.59	5.92	7.26	4.51	7.96	5.62
7.	Ղրղզստան	6.31	5.88	6.73	3.82	7.06	6.32
8.	Լատվիա	8.13	8.84	7.42	6.35	9.37	9.81
9.	Լիտվա	8.21	8.80	7.61	6.43	9.11	9.84
10.	Մոլդովա	6.93	7.22	6.63	3.95	8.24	8.35
11.	Ռուսաստանի Դաշնություն	6.37	6.06	6.69	4.05	7.68	6.25
12.	Տաջիկստան	6.41	6.02	6.81	3.47	8.57	6.02
13.	Թուրքմենստան	..	..	..	..	..	..
14.	Ուկրաինա	6.89	7.58	6.20	4.46	8.65	8.60
15.	Ուզբեկստան	..	..	..	..	..	..
Միջին թվաբանական		**7.08**	**7.10**	**7.06**	**4.88**	**8.52**	**7.50**

Աղբյուրը. *կազմվել և հաշվարկվել է ըստ՝ The Human Freedom Index: A Global Measurement of Personal, Civil, and Economic Freedom. CATO Institute, Fraser Institute, Friedrich Naumann Stiftung, IEA, VISIO*, 2015 տվյալների:

Նկատենք նաև, որ տնտեսական ազատության ցուցանիշով Խորհրդային Միության նախկին 15 հանրապետությունների շարքում ՀՀ-ը (7.67) զիջում է միայն Վրաստանին (7.83)՝ առաջ անցնելով նույնիսկ մերձբալթյան երեք հանրապետություններից գերազանցելով այդ խմբի միջին ցուցանիշը (7.06): Հայաստանը, ըստ օրենքի գերակայության ցուցանիշի (4.63), զիջում է տվյալ խմբի միջին ցուցանիշը (4.88), ինչպես նաև Մերձբալթյան երկրներին, Վրաս-

տանին, իսկ անվտանգության և պաշտպանվածության ցուցանիշով զիջում է միայն Մերձբալթյան երկրներին և գերազանցում է տվյալ խմբի միջին մեծությունը (8.52):

Անհատական ազատության (հանած օրենքի գերակայությունը և անվտանգությունը) ցուցանիշով Հայաստանը զիջում է մերձբալթյան հանրապետություններին, Ուկրաինային (8.60), Վրաստանին (8.35), Մոլդովային (8.35), ինչպես նաև տվյալ խմբի միջին մեծությունը (7.50): Այսպիսով՝ Խորհրդային Միության նախկին երկրներում մարդու ազատության համաթվի 2013 թ. ցուցանիշների շարքում Հայաստանը զիջում է անհատական ազատության, օրենքի գերակայության և անհատական ազատության (հանած օրենք գերակայությունը և անվտանգությունը) ցուցանիշներով, ինչը նշանակում է, որ երկիրը հետագա զարգացման քաղաքականության մշակման ժամանակ իր ուշադրության կենտրոնում պետք է պահի նշված երեք ուղղությունները:

Աղյուսակ 3-ում բերված են մարդու ազատության համաթվի միջին մեծություններն ըստ երկրների տարբեր (10-ը) խմբավորումների: Մարդու ազատության համաթվի ամենաբարձր արժեք ունեցող 10 երկրներում ազատության համաթիվը (8.61) զգալիորեն բարձր է այդպիսի ամենացածր համաթիվ ունեցող 10 երկրների ցուցանիշից (4.88): Այդ ցուցանիշը նույն արժեքն (8.15) ունի և՛ ՏՀՀԿ, և՛ Եվրոմիության երկրներում:

Աղյուսակ 3

Մարդու ազատության համաթվի միջին մեծություններն ըստ երկրների տարբեր խմբավորումների՝ 2013 թվականին

ՀՀ	Երկրների խմբավորումներ	Ազատության համաթիվ	Անհատական ազատություն	Տնտեսական ազատություն	Օրենքի գերակայություն	Անվտանգություն և պաշտպանվածություն	Անհատական ազատություն (հանած օրենքի գերակայությունը և անվտանգությունը)
1.	Աշխարհը	6.93	7.02	6.84	5.19	7.97	7.46
2.	ՏՀՀԿ երկրներ	8.15	8.87	7.43	7.14	9.52	9.40
3.	Եվրոմիություն	8.15	8.94	7.36	7.02	9.64	9.55
4.	Խորհրդային Միության նախկին երկրներ	7.08	7.10	7.06	4.88	8.52	7.50
5.	Նախկին համայնավարական երկրներ	7.41	7.72	7.10	5.36	8.99	8.26
6.	ԱՊՀ	6.59	6.40	6.79	4.11	8.27	6.60
7.	ՀՀ և հարևան երկրներ	6.55	6.26	6.84	4.46	8.48	6.05
8.	ԵԱՏՄ	6.63	6.16	7.09	4.25	7.93	6.23
9.	Մարդու ազատության ամենաբարձր համաթիվ ունեցող 10 երկրներ	8.61	9.27	7.95	7.93	9.74	9.71
10.	Մարդու ազատության ամենացածր համաթիվ ունեցող 10 երկրներ	4.88	4.54	5.23	3.29	5.97	4.44

Աղբյուրը. կազմվել և հաշվարկվել է ըստ՝ The Human Freedom Index: A Global Measurement of Personal, Civil, and Economic Freedom. CATO Institute, Fraser Institute, Friedrich Naumann Stiftung, IEA, VISIO, 2015 տվյալների:

Բերված երկրների խմբավորումների մեջ ազատության համաթիվը ամենացածրերից մեկն է ՀՀ և հարևան երկրներում (6.55), ինչպես նաև ԵԱՏՄ երկրներում (6.63): Երկու դեպքում էլ ցուցանիշները ավելի ցածր են աշխարհի ցուցանիշից (6.93): ՀՀ և հարևան երկրների խմբի տնտեսական ազատության ցուցանիշը (6.84) համընկնում է աշխարհի ցուցանիշի հետ, անվտանգության և պաշտպանվածության ցուցանիշով (8.48) գերազանցում են աշխարհի ցուցանիշը (7.97), իսկ մարդու ազատության համաթվի մնացած 4 բաղադրիչները զիջում են մնացած բոլոր խմբերի ցուցանիշները (բացի «Մարդու ազատության ամենացածր համաթիվ ունեցող 10 երկրների» խմբի):

Աղյուսակ 4-ում ներկայացված են տնտեսական ազատության համաթվի և դրա բաղադրիչների տվյալները նախկին Խորհրդային Միության երկրներում՝ 2014 թվականին: Տնտեսական ազատության գումարային ցուցանիշի մեծությամբ (7.71) Հայաստանը զիջում է Վրաստանին (7.98) և Լիտվային (7.81): Ըստ որում, բերված 5 բնագավառներից միայն երկրորդի («Իրավական համակարգը և սեփականության իրավունքները») մասով է, որ Հայաստանը (որն ունի 5.56 միավոր) զիջում է տվյալ խմբի միջին մեծությունը (5.86): Մնացած բոլոր բնագավառներում («Կառավարության չափը», «Վճարունակ փողը», «Արտաքին առևտրի ազատությունը», «Կարգավորումները») Հայաստանի ցուցանիշները գերազանցում են համապատասխան բնագավառների (1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ) միջին մեծությունները, ինչը վկայում է, որ ՀՀ-ում իրականացված բարեփոխումների ռազմավարությունը ճիշտ է ընտրված և հետխորհրդային տնտեսական տարածքում արդարացրել է իրեն:

Աղյուսակ 4

Տնտեսական ազատության համաթիվը և դրա բաղադրիչները Խորհրդային Միության նախկին երկրներում՝ 2014 թվականին

ՀՀ	Երկիր	Տնտեսական ազատության գումարային ցուցանիշ	Բնագավառ 1՝ կառավարության չափը	Բնագավառ 2՝ իրավական համակարգը և սեփականության իրավունքները	Բնագավառ 3՝ վճարունակ փողը	Բնագավառ 4՝ արտաքին առևտրի ազատությունը	Բնագավառ 5՝ կարգավորումները
1.	Հայաստան	7.71	7.73	5.56	9.36	8.38	7.49
2.	Ադրբեջան	6.55	5.19	5.95	7.45	7.07	7.08
3.	Բելառուս	..	..	..	..	..	..
4.	Էստոնիա	7.70	5.95	7.30	9.13	8.39	7.72
5.	Վրաստան	7.98	7.83	6.61	9.11	8.45	7.90
6.	Ղազախստան	7.35	7.49	6.30	8.98	6.04	7.94
7.	Ղրղզստան	7.16	7.94	4.70	8.68	7.37	7.14
8.	Լատվիա	7.57	5.87	6.61	9.29	8.34	7.75
9.	Լիտվա	7.81	7.20	6.44	9.41	7.89	8.10
10.	Մոլդովա	6.72	6.47	5.01	7.83	7.25	7.05
11.	Ռուսաստանի Դաշնություն	6.66	6.49	5.38	8.95	5.84	6.64
12.	Տաջիկստան	6.97	6.46	5.55	9.12	6.89	6.83
13.	Թուրքմենստան	..	..	..	..	..	..
14.	Ուկրաինա	6.00	6.52	4.86	5.93	6.02	6.69
15.	Ուզբեկստան	..	..	..	..	..	..
Միջին թվաբանական		**7.18**	**6.76**	**5.86**	**8.60**	**7.33**	**7.36**

Աղբյուրը. *կազմվել և հաշվարկվել է ըստ՝ Economic Freedom Ranking 2014, Fraser Institute, https://www.fraserinstitute.org/economic-freedom/dataset?min-year*

Աղյուսակ 5-ում բերված են տնտեսական ազատության համաթվի և դրա բաղադրիչների միջին մեծություններն ըստ երկրների տարբեր խմբավորումների՝ 2014 թվականին: «ՀՀ և հարևան երկրներ» խումբը տնտեսական ազատության գումարային ցուցանիշով (6.87) գերազանցում է աշխարհի ցուցանիշը (6.85): Աշխարհի միջին ցուցանիշը երկրների այս խումբը գերազանցում է նաև «Կառավարության չափը», «Իրավական համակարգը և սեփականության իրավունքները», «Վճարունակ փողը» բնագավառներում, սակայն զիջում է «Արտաքին առևտրի ազատությունը» (6.81) և «Կարգավորումները» (6.86) ոլորտներում: «ՀՀ և հարևան երկրներ» խումբը (աշխարհագրական իմաստով, ներկայացնում է հարևան երկրների տարածաշրջան) տնտեսական ազատության գումարային ցուցանիշով (բացի աշխարհի և տնտեսական ազատության ամենացածր համաթիվ ունեցող 10 երկրների խմբի) զիջում է մնացած բոլոր երկրների խմբերին: Այլ կերպ ասած՝ եթե «ՀՀ և հարևան երկրներ» խումբը տնտեսական քաղաքականության իրականացման ընդհանուր ուղղությամբ քայլում է աշխարհին համընթաց, ապա երկրների առանձին խմբավորումների համեմատությամբ դրանց զգալիորեն զիջում է, ինչը նշանակում է, որ տնտեսական բարեփոխումները պետք է շարունակել «ինչպես խորությամբ, այնպես էլ լայնությամբ»:

Աղյուսակ 5

Տնտեսական ազատության համաթիվը և դրա բաղադրիչների միջին մեծություններն ըստ երկրների տարբեր խմբավորումների՝ 2014 թվականին

ՀՀ	Երկրների խմբավորումներ	Տնտեսական ազատության գումարային ցուցանիշ	Բնագավառ 1՝ կառավարության չափը	Բնագավառ 2՝ իրավական համակարգը և սեփականության իրավունքները	Բնագավառ 3՝ վճարունակ փողը	Բնագավառ 4՝ արտաքին առևտրի ազատությունը	Բնագավառ 5՝ կարգավորումները
1.	Աշխարհը	6.85	6.42	5.54	8.25	7.00	7.03
2.	ՏՀԶԿ երկրներ	7.52	5.54	7.21	9.43	8.02	7.39
3.	Եվրոմիություն	7.48	5.34	6.95	9.47	8.21	7.43
4.	Խորհրդային Միության նախկին երկրներ	7.18	6.76	5.86	8.60	7.33	7.36
5.	Նախկին համայնավարական երկրներ	7.21	6.43	5.76	8.84	7.66	7.35
6.	ԱՊՀ	6.89	6.79	5.41	8.29	6.86	7.11
7.	ՀՀ և հարևան երկրներ	6.87	6.55	5.75	8.40	6.81	6.86
8.	ԵԱՏՄ	7.22	7.41	5.48	8.99	6.91	7.30
9.	Տնտեսական ազատության ամենաբարձր համաթիվ ունեցող 10 երկրներ	8.22	7.29	7.86	9.40	8.41	8.13
10.	Տնտեսական ազատության ամենացածր համաթիվ ունեցող 10 երկրներ	4.82	4.93	3.50	6.17	4.32	5.20

Աղբյուրը. *կազմվել և հաշվարկվել է ըստ՝ Economic Freedom Ranking 2014, Fraser Institute, https://www.fraserinstitute.org/economic-freedom/dataset?min-year*

Օգտագործված գրականություն

1. The Human Freedom Index: A Global Measurement of Personal, Civil, and Economic Freedom, Cato Institute, Fraser Institute Friedrich Naumann Stiftung, IEA, VISIO, 2015.
2. Locke J., 1691/1960, Two Treatises of Government: The Second Treatise: Liberty Fund, at Online Library of Liberty, http://oll.libertyfund.org/titles/222#Locke_0057_71.
3. George H. Smith, The System of Liberty: Themes in the History of Classical Liberalism. New York: Cambridge University Press, 2013.
4. Palmer Tom G., Realizing Freedom: Libertarian Theory, History, and Practice (Washington: Cato Institute, 2009).

АШОТ МАРКОСЯН
Заместитель начальника Управления по управлению государственным имуществом при Правительстве РА, доктор экономических наук, профессор

ГРИГОР КУРГИНЯН
Соискатель Института экономики им. М.Котаняна Национальной Академии наук РА

Человеческая свобода и экономическая свобода как фундамент рыночной экономики.– Понятие “капитализм” как в обыденной жизни, так и среди экономистов часто отождествляется со свободной рыночной экономикой, и не случайно в постсоветских странах, в том числе в РА, используется в основном второе определение. Это связано с укоренившимся в сознании людей восприятием того, что в основе свободных рыночных взаимодействий лежат добровольные партнерские отношения или право сторон на свободное сотрудничество. С этой точки зрения можно сказать, что свободная рыночная экономика строится как на свободе личности (человека), так и экономической свободе. По этой причине личная и экономическая свобода считается краеугольным камнем (фундаментом), на котором зиждятся рыночные институты и система экономических ценностей рынка. Именно устойчивостью такого фундамента и определяется совершенность всей рыночной экономики, а также успешность рынка, и в первую очередь – обеспечение высокого уровня жизни населения.

С помощью показателей личной (человеческой) и экономической свободы измеряются как положение дел в обеспечении этой свободы за определённый период времени, так и изменения, происходящие в разных странах из года в год. Индекс человеческой свободы и индекс экономической свободы позволяют оценивать положение дел во всех странах мира.

В статье представлены индексы человеческой и экономической свободы в странах бывшего Советского Союза, проведен также сравнительный анализ показателей этих стран с показателями стран, сгруппированных по различным признакам: принадлежности к экономическим союзам, уровню развития, географической близости. Авторами даны предложения по улучшению позиций Республики Армения в мировом рейтинге стран по индексам человеческой и экономической свободы.

Ключевые слова: *человеческая свобода, экономическая свобода, индекс, верховенство закона, индекс безопасности, благосостояние, либеральная идеология.*
JEL: A13, D6, N3

ASHOT MARKOSYAN
Deputy Head of State Property Management Department at the Government of the RA, Doctor of Economics, Professor

GRIGOR KURGHINYAN
Researcher at the Institute of Economics after M.Kotanyan, NAS RA

Human Freedom and Economic Freedom as the Cornerstones of the Market Economy.– The definition of "capitalism" in everyday life and among economists is often identified with a free market economy, and it isn't by chance that the second definition is used in the Post-Soviet countries, including the Republic of Armenia. This is due to the perception in the minds of people that free market partnerships are based on voluntary partnerships or the right of parties to free cooperation. From this point of view, it can be said that a free market economy is built on both – personal (human) freedom and economic freedom. For this reason, personal freedom and economic freedom are considered the cornerstones (base) on which market institutions and the system of economic values of the market are based. It is the stability of such a foundation that determines the perfection of the entire market economy, as well as the success of the market, and, first of all, in ensuring high living standards for the population.

With the help of indicators of human freedom and economic freedom, the state of affairs in ensuring these freedoms over a certain period of time, as well as changes occurring in different countries from year to year, are measured. The index of human freedom and the index of economic freedom make it possible to assess the state of affairs in all countries of the world.

The article presents indexes of human and economic freedom in the countries of the former Soviet Union and compares the indicators of these countries with those of countries grouped according to different criteria – attachment to the certain economic unions, level of development, geographic proximity. The authors have made suggestions on improving the position of the Republic of Armenia in the world ranking of countries on the indexes of human freedom and economic freedom.

Key words: *human freedom, economic freedom, index, rule of law, security index, welfare, liberal ideology.*
JEL: A13, D6, N3